ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Սավա ՍՊԸ-ն ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/1 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
95	Մակարոն սովորական, փաթեթավորումը՝ 5, 10 և 25 կգ՝ ըստ Գնորդի, անդրոժ խմորից, մակարոնեղենի խոնավություն 12 %-ից ոչ ավել, մոխրայնությունը՝ 2.1–ից ոչ ավելի, թթվայնությունը 5 %-ից ոչ ավելի, առանց աղտոտ խառնուկները, 0.3 %-ից ոչ ավելի, վնասատուներով վարակվածություն չի թույլատրվում, փաթեթավորումը՝ սննդի համար նախատեսված պոլիէթիլենային թաղանթով՝ համապատասխան մակնշումով, կախված ալյուրի տեսակից և որակից՝ A (պինդ ցորենի ալյուրից), Б (փափուկ ապակենման ցորենի ալյուրից), B (հացաթխման ցորենի ալյուրից), չափածրարված և առանց չափածրարման, ГОUS 31743-2012 կամ համարժեք: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ N 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 20-ի N 58 որոշմամբ հաստատված «Սննդային հավելումների, բուրավետիչների և տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» (ՄՄ ՏԿ 029/2012), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) տեխնիկական կանոնակարգերի: Մատակարարումն իրականացվում է առնվազն շաբաթական մեկ անգամ: Պահանջագիրը Վաճառողին տրամադրվում է յուրաքանչյուր մատակարարումից առնվազն 2 (երկու) աշխատանքային օր առաջ: Պահանջագիրը Վաճառողին տրամադրվում է

	էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցներով: Մատակարարումն իրականացվում է աշխատանքային օրվա ժամը 08:30-09:00 ընկած ժամանակահատվածում՝ համապատասխան մանկապարտեզներ նշված հասցեներով: Սննդամթերքի փոխադրումը տրանսպորտային միջոցներով իրականացնելիս պետք է ապահովել հետևյալ պայմանները՝ տրանսպորտային միջոցների բեռնային բաժանմունքների և բեռնարկղերի կառուցվածքը պետք է ապահովված լինի աղտոտումից, կենդանիների, այդ թվում՝ կրծողների և միջատների ներթափանցումից, տրանսպորտային միջոցների բեռնային բաժանմունքների և բեռնարկղերի ներքին մակերևույթը պետք է պատրաստված լինի լվացվող և ոչ թունավոր նյութերից և պետք է պարբերաբար ենթարկվի անհրաժեշտ մաքրման, լվացման և ախտահանման: Առաքողները պետք է ապահովված լինեն սանիտարական արտահագուստով (խալաթ և ձեռնոցներ): Տեխնիկական բնութագրին կամ մատակարարման պայմաններին անհամապատասխանություն ի հայտ գալու դեպքում անհամապատասխանության շտկման ժամկետ է սահմանվում 60 րոպե: Մատակարարումը կատարվում է Վաճառողի միջոցների հաշվին՝ համապատասխան մանկապարտեզներ նշված հասցեներով՝ ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2017 թվականի «Սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոցների համար սանիտարական անձնագրի տրամադրման կարգը և սանիտարական անձնագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» թիվ 85-Ն հրամանով հաստատված սննդամթերքի տեղափոխման համար նախատեսված տրանսպորտային միջոցներով: Ապրանքատեսակի նշված ծավալը առավելագույնն է, այն կարող է նվազեցվել Գնորդի կողմից, հաշվի առնելով տարվա ընթացքում մանկապարտեզ հաճախող երեխաների փաստացի թվաքանակը և ֆինանսավորումը կիրականացվի փաստացի մատակարարված ապրանքի մասով: Գնորդն իրավունք ունի յուրաքանչյուր մատակարարված ապրանքի(ների) փորձանմուշը ուղարկել լաբորատոր փորձաքննության: Լաբորատոր հետազոտությունների արդյունքում բացասական եզրակացության ստացման դեպքում՝ ղեկավարվել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

САВА ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/1 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
95	